ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի խոսքը Շանգալի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակին

03.08.2020 թ.

2014 թվականին այս օրը եզդիների օրացույցում սև շրջանակի մեջ վերցվեց. եզդիաբնակ Շանգալ բնակավայրում իսլամիստ ահաբեկիչների կողմից տասնյակ հազարավոր եզդիներ սպանվեցին, սեռական բռնությունների ենթարկվեցին մեծաթիվ կանայք ու աղջիկներ: Շատերն էլ, չցանկանալով հավատափոխ լինել, ինքնասպան եղան՝ իրենց ցած նետելով ժայռերից:

Եզդիների ցեղասպանությունը ցնցեց նաև Հայաստան աշխարհը, հայ ժողովրդին. ամենուր ձևավորվեցին «օգնիր եզդիներին» համահայաստանյան խմբեր: Ցեղասպանություն ապրած հայ ժողովուրդը միջազգային տարբեր ատյաններում դատապարտեց եզդիների ցեղասպանությունը և մարդկությանը կոչ արեց սատար կանգնել եզդի ժողովրդին:

Իսկ այսօր, մեր եղբայրական եզդի ժողովրդի հետ մի բռուցք դարձած, մենք ոգեկոչում ենք Իրաքի հյուսիսում եզդիների դեմ իրականացված ցեղասպանության զոհերի հիշատակը և կրկին դատապարտում մարդկության դեմ իրականացված և շարունակվող ոճրագործությունները:

Ինչ խոսք, այսօր նաև փաստում ենք, որ, տասնյակ հազարավոր զոհեր ունենալով հանդերձ, եզդի ժողովրդին ցեղասպանել չի հաջողվել և չի հաջողվելու, որովհետև դարերի խորքից եկող այս ազգը պատրաստ է անգամ ինքնազոհողության գնով պահպանել իր հավատը և ազգային արժեքները:

Եվ ուրեմն, փառք եզդի ժողովրդին, հավերժ խոնարհում հանուն ազգային արժեքների իրենց կյանքը զոհած մեր նահատակների հիշատակին: Թող աստված լույսի մեջ պահի նրանց հոգիները և իր օրհնությունը բերի եզդի ժողովրդին: